





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

БИОБИБЛИОГРАФИЯ
АРМЯНСКИХ ИСКУССТВОВЕДОВ
N 6

ВИГЕН КАЗАРЯН

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2018

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

BIOBIBLIOGRAFY OF
ARMENIAN ART CRITICS
N 6

VIGEN GHAZARYAN

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2018

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
N 6**

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

**ՆԵՐԱԾԱԿԱՆԸ՝
արվեստագիտությունը դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ
Աննա ԱՍԱՏՐՅԱՆԻ**

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2018**

ՀՏԴ 01:7.03
ԳՄԴ 91.9:85
Վ 562

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼ ԵՆ
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ
ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆԸ**

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ՝
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ
ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ**

Վ 562

Վիզեն Ղազարյան: Կենսամատենագիտություն /կազմ.: Մ.Կիրակոսյան, Մ.Քամայրյան. - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018. - 40 էջ:

Մատենագիտությունն ընդգրկում է Վ. Ղազարյանի 1968-2018 թվականների տպագիր աշխատանքների ցանկը՝ նրա գիտական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկով:

ՀՏԴ 01:7.03
ԳՄԴ 91.9:85

ISBN 978-5-8080-1349-0

© ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 2018

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐԹԱՆ .
ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԸ ՈՒ
ԲԱԶՄԱՀՄՈՒՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Լրացավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Հովհաննեսի Ղազարյանի ծննդյան 75-ամյա հոբելյանը:

Ծնվել է 1943թ. մարտի 16-ին Երևանում, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հայ նոր և նորագույն գրականության պատմության և տեսության մասնագետ Հովհաննես Ղազարյանի և Հայաստանի հեռուստառադիոպետությունի կադրերի բաժնի վարիչ Ամալյա Ղազարյանի ընտանիքում:

1960-ին ավարտելով Երևանի հնագույն դպրոցներից մեկը՝ Ազասի Խանջյանի անվան միջնակարգ դպրոցը, Վ.Ղազարյանն ընդունվում է Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի նկարչության և տարրական կրթության մեթոդիկայի բաժինը, որի լրիվ դասընթացն ավարտում է 1965-ին՝ ստանալով «միջնակարգ դպրոցի տարրական դասարանների և նկարչության ուսուցչի» որակավորում:

1965-66թթ. Վ.Ղազարյանն աշխատում է պարբերական մամուլի և ռադիոյի լուրերի թարգմանիչ Արմտագի (Արմենյանի) թարգմանչական բաժնում, իսկ 1967-68 թվականներին՝ Հայկական սովետական հանրագիտարանում որպես կրտսեր գիտաշխատող, կազմում մի շարք բառացանկեր (հայոց լեզվի քերականության, կերպարվեստի, բայետի և այլն):

1968-69թթ. Վ.Ղազարյանն աշխատում է Հայաստանի պետական պատկերասրահում որպես էքսկուրսավար:

1969թ. Վ.Ղազարյանն ընդունվում է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ասպիրանտուրա, արվեստագիտության թեկնածու Լևոն Ազարյանի ղեկավարությամբ ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի խորհրդի 1975թ. մայիսի 23-ի նիստում պաշտպանում թեկնածուական ատենախոսություն «Սարգիս Պիձակ» թեմայով, ԽՍՀՄ ԲՈՂ 1975թ. հոկտեմբերի 15-ի որոշմամբ ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան և աշխատանքի անցնում ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում նախ որպես կրտսեր գիտաշ-

խատող, հետագայում որակավորվում որպես ավագ, առաջատար և գլխավոր գիտական աշխատող: 1988 թվականից առ այսօր նա ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչն է: Վ.Ղազարյանը բազմիցս ընտրվել է Արվեստի ինստիտուտի արհմիության տեղիումի նախագահ:

Վ.Ղազարյանը ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է, իր ստեղծման օրից՝ 1996 թվականից ի վեր, Ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ (1996-2008-ին՝ նախագահի տեղակալ): 2014-ից «ԿԱՆԹԵՂ» գիտական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ է:

Ռուսաստանի Դաշնություն մշակույթի նախարարության Արվեստագիտության ինստիտուտում (Մոսկվա) 1992թ. Վ.Ղազարյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Խորանների մեկնությունները» թեմայով, և նրան շնորհվում է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

2000 թ. Վ.Ղազարյանը ստանում է պրոֆեսորի գիտական կոչում:

2010 թ. ընտրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Զուգահեռաբար ընդհատումներով որպես թարգմանիչ Վ.Ղազարյանն աշխատել է Հայաստանի հեռուստառադիոպետությունի Սիլվուռքի բաժնում, դասախոսել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, 1990-2000-ական թթ. եղել ՀՀ կառավարությանն առընթեր գիտական թեմաների հաստատման հանձնաժողովի անդամ:

Լայն ու ընդգրկուն են հետազոտողի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նրան հավասարապես զբաղեցրել է թե՛ հայ միջնադարյան կերպարվեստի, թե՛ արդի հայ նկարիչների և քանդակագործների (այդ թվում՝ Արշիլ Գորկի, Մարտիրոս Սարյան, Էդուարդ Իսաբեկյան, Արամ Իսաբեկյան, Գագիկ Ղազարյան, Վաղարշակ Արամյան, Կարեն Սմբատյան, Անդրանիկ Կիլիկյան) ստեղծագործության հետազոտությունը:

Վ.Ղազարյանը երևանում և Մոսկվայում հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված տասնյակ արվեստագիտական գրքերի և ալբոմների, այդ թվում՝ 1981-ին Մոսկվայում լույս տեսած «Մատենադարան»

պատկերազրքի (Համահեղինակ՝ Սեյրանուշ Մանուկյան)¹, ինչպես նաև Երևանում, Թիֆլիսում, Մոսկվայում, Իտալիայի տարբեր քաղաքներում, Նյու Յորքում և այլուր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տպագրված շուրջ 150 գիրտական, քննադատական, հանրագիտարանային (այդ թվում՝ Հայկական սովետական հանրագիտարանի, «Բրիտանյա Հայաստան» հանրագիտարանի և «Հայաստան» հանրագիտարանի) հոդվածների հեղինակ է:

Խոստովնայից էր երիտասարդ հետազոտողի մուտքն արվեստաբանություն: Նա ուսումնասիրում է առանձին մանրանկարիչների կյանքն ու ստեղծագործությունը, առաջին անգամ գիտական շրջանառություն մեջ դնում և պատմականորեն արժեքավորում սակավ հայտնի պատկերազարդ ձեռագրեր, որոշակի պատմաշրջանում դիտարկում գեղարվեստական որոշ երևույթների (օրինակ՝ սյուսետային մանրանկարի) էվոլյուցիան՝ իր բոլոր ասպեկտներով ևն:

1980-ին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվում է Վիգեն Ղազարյանի անդրանիկ մենագրությունը՝ «Սարգիս Պիծակ» աշխատությունը², որը նվիրված էր կիրիկյան մանրանկարչության կարևորագույն դեմքերից մեկի՝ XIV դարի առաջին կեսի մանրանկարիչ Սարգիս Պիծակի ստեղծագործության ուսումնասիրությանը: Մատենադարանի ձեռագրերի հիման վրա հետազոտողը ներկայացնում է պիծակյան ձեռագրերում Մեծ Հայքի և կիրիկյան մանրանկարչական արվեստի սինթեզը պայմանավորող պատմական, գաղափարական-գեղարվեստական նախադրյալները, հետազոտում մանրանկարների պատկերազրույթները, բացահայտում Պիծակի արվեստի ոճական-կառուցվածքային առանձնահատկությունները, մատնանշում նրա տեղն ու դերը Հայ միջնադարյան մանրանկարչության հարուստ պատմության մեջ: Վ. Ղազարյանի գիտական ուսումնասիրության մեջ կիրիկյան Հայաստանի վերջին մեծանուն մանրանկարիչը ներկայացված է նորովի, որպես ոչ թե անկումային նկարիչ, այլ՝ նորարար, որը դիմում է պատկերային և պատկերագրական նոր համակարգի, բերում է գունագծային նոր հետևողական

¹ Казарян В.О., Манукян С.С., Матенадаран, Том 1, Армянская рукописная книга, Москва, “Книга”, 1981, 282 с., 402 илл.

² Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ /Պատ. խմբ.՝ Լ.Ռ.Ազարյան/, Երևան, ՀՍՄՀ ԳԱ Հրատ., 1980, 152 էջ, 39թ. նկ.:

մոտեցում, Թորոս Ռոսլինի և կիլիկյան արվեստի ծաղկման շրջանի դինամիկ կոմպոզիցիաների փոխարեն ստեղծում երկրաչափորեն ներդաշնակ հորինվածքներ և հավասարակշռված դարձնում նույնիսկ միմյանց վրա պատկերված կոմպոզիցիաները: Մանրանկարիչը գործածում է սառը՝ սառի և տաքը՝ տաքի հետ մաքուր, գրեթե անխառն գունաչափ, ստեղծագործաբար օգտվում կապադովկիական որմնանկարների արվեստի ոճական, գծային օրինակներից, ստեղծում գլխավոր և երկրորդական պերսոնաժների բնորոշ կերպարներ, որոնք փոխադրվում են ձեռագրից ձեռագիր, պարզեցնում է զարդամոտիվները, ինչպես և գրչութայան արվեստը, հետևելով հոր՝ Գրիգոր Պիծակի օրինակին:

Բոլորովին այլ խնդիրներ են առաջադրված և մշակված 1984-ին հրատարակված «Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ - XIV դարի սկիզբ)» մենագրություն³ մեջ, որտեղ ներկայացվում են ավետարանական սյուժեների պատկերային անմիջական վերարտադրություններից, որոնց անտիկ և քրիստոնեական ակունքները, վերարտադրության պատկերագրական-սիմվոլիկ կողմը: Տարբեր ձեռագրերի համեմատական վերլուծությամբ արվեստաբանը ցույց է տալիս ավետարանիչների պատկերների պատկերագրական էվոլյուցիան, ներկայացնում ամենահարուստ՝ «Ութ մանրանկարիչների ավետարանի» (Մատ. N 7651) մանրանկարների նկարագրական ցանկը: Հեղինակը փորձել է ճշտորեն առանձնացնել այն պատկերները, որոնք ուղղակի գրեթե նույնությամբ արտանկարված են հունական X-XI դդ. մի նշանավոր ձեռագրից (Ֆյորենցիա), ուսումնասիրել ոչ միայն հիմնական, այլև երկրորդական թեմաների պատկերագրությունը:

Դոկտորական ատենախոսության հիմնական արդյունքների հիման վրա 1995-ին հրատարակվում է Վ.Ղազարյանի «Խորանների մեկնություններ» ուսումնասիրությունը՝ (աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Ղազարյանի)⁴, իսկ 2004-ին՝ «Մեկնությունք խորանաց: (Արվեստի տեսության միջնադարյան հայկա-

³ Ղազարյան Վ., Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ-XIV դարի սկիզբ) /Պատ. խմբ.՝ Վ.Հ.Մաթևոսյան/, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 190 էջ, 32թ. նկ.:

⁴ Խորանների մեկնություններ /Աշխ.-սիրություն՝ Վ.Ղազարյան: Խմբ. խորհ.՝ Ա.Զարյան և ուրիշներ: Խմբ.՝ Գ.Տեր-Վարդանյան/, Երևան, «Սարգիս Խաչենց Այբբենգիտ» հրատ., 1995, 191 էջ, 4թ. նկ.:

կան բնագրեր)» աշխատությունը⁵, տասներկու տեքստերի մանրամասն տարընթերցումներով:

2009-ին Հրատարակվում է Արարատ Աղասյանի, Մուրադ Հասրաթյանի, Հրավարդ Հակոբյանի և Վիգեն Ղազարյանի «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հիմնարար աշխատությունը⁶, որն ամփոփում է Հայ արվեստի գլխավոր ճյուղերի, այսպես կոչված «պլաստիկ արվեստների»՝ ճարտարապետության և կերպարվեստի զարգացման պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Աշխատության հեղինակներն արժանանում են 2009 թվականի ՀՀ Պետական մրցանակին՝ կերպարվեստի ոլորտում:

Հայ միջնադարյան կերպարվեստի պատմական ուղին է լուսաբանվել Վիգեն Ղազարյանի և Հրավարդ Հակոբյանի «Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն» աշխատության մեջ⁷ (2012), որտեղ առանձնացված են ճարտարապետական քանդակագործումը, վաղ միջնադարյան կոթողները, խաչքարերը, որմնանկարչությունը, մանրանկարչությունը, գեկորատիվ-կիրառական արվեստը և սրբապատկերը:

Վ.Ղազարյանը մասնակցել է տասնյակ միջազգային գիտաժողովների Հայաստանում (նաև՝ Արցախում), Վրաստանում, Ռուսաստանում, Իտալիայում, ԱՄՆ-ում, դասախոսություններ կարդացել Մոսկվայի պետական համալսարանի և Գերմանիայի Վարբուրգի համալսարանի սաների համար (Երևանում և Դիլիջանում), ամառային դասընթացներ վարել Վենետիկի Ֆոսկարիի համալսարանում: Ուշագրավ է, մասնավորապես, նրա ակտիվ մասնակցությունը Հայ արվեստին նվիրված երկրորդ, երրորդ և չորրորդ սիմպոզիումների կազմակերպմանը՝ ընդգրկվել է աշխատանքային խմբում, Արվեստի ինստիտուտի կողմից Հայ մշակույթին և արվեստին նվիրված բոլոր հանրապետական կոնֆերանսների կազմակերպման գործին՝ լինելով հրապարակվող գեկուցումների թեզերի ժողովածուների խմբագիրը:

⁵ Մեկնությունք խորանայ: (Արվեստի տեսություն միջնադարյան հայկական բնագրեր): Աշխ.՝ Վ.Հ.Ղազարյանի, մասնագիտ. խմբ.՝ Հ.Հովհաննիսյան, Գ.Տեր-Վարդանյան, Ս.Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, 480 էջ, 28թ. նկ.:

⁶ Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2009, 575 էջ, նկ.:

⁷ Ղազարյան Վ., Հակոբյան Հ., Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, «Զանգակ», 2012, 260 էջ:

Վ.Ղազարյանը խմբագիր է մի շարք գիտական աշխատությունների, թարգմանությունների՝ ուսանողներից, անգլերենից, գերմաներենից և գրաբարից:

Արդյունաշատ է Վ.Ղազարյանի մանկավարժական գործունեությունը: Տասնամյակներ շարունակ դասավանդելով Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, նա իր փորձն ու գիտելիքներն է փոխանցում ապագա արվեստաբաններին: Վաստակաշատ մանկավարժը 1999-2013 թվականներին ղեկավարել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի պատմություն և տեսություն ամբիոնը, իսկ 2013-2018թթ.՝ արվեստագիտություն և հումանիտար գիտությունների ամբիոնը: Նա Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի (ներկայումս՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա) գիտական խորհրդի անդամ է, ՀԳՊԱ «Տարեգրքի» խմբագրական խորհրդի անդամ:

Անուբանալի է Վ.Ղազարյանի ներդրումը երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում. նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 29 ատենախոսություն: Նրա սաներն այսօր աշխատում են ինչպես ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում, այնպես էլ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի պետական համալսարանում, Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և այլուր:

Նա ղեկավարել է ուսանողների ամփոփիչ ատեստավորման աշխատանքների հանձնաժողովները Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական և մանկավարժական աշխատանքներին զուգընթաց Վ.Ղազարյանը զբաղվել և զբաղվում է նկարչությամբ. նա Հայաստանի նկարիչների միություն անդամ է 2002 թվականից: Ջնայած մշտական զբաղվածությունը՝ նա շարունակել է նկարել տարբեր տեխնիկաներով, որի արդյունքը եղավ 2002թ. Հայաստանի նկարիչների միության սրահում արվեստաբանի նկարների ցուցահանդեսը և 2008թ. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի տեր և տիկին ԲոյաՇյանների ցուցասրահում կազմակերպված նկարների անհատական ցուցահանդեսը: Իսկ 2015թ. նրա նկարների անհատական ցուցահանդեսը կազմակերպվեց Հա-

յատանի նկարիչների միության սրահում: Ծննդյան հոբելյանին ընդառաջ հրատարակվեց Վ.Ղազարյանի նկարների պատկերազիրքը:

1997-ից Հայաստանի գրողների միության անդամ միջնադարագետ արվեստաբանի ստեղծագործական գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում պոեզիան: 2016-ին ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ «Նաիրի» հրատարակչությունը լույս ընծայեց Վ.Ղազարյանի բանաստեղծությունների և ուսերենից, անգլերենից ու գերմաներենից նրա կատարած բանաստեղծական թարգմանությունների (Մայակովսկի, Գյոթե, Շեքսպիր, Օսկար Ուայլդ, 20-րդ դարի անգլո-ամերիկյան պոեզիա) ժողովածուն⁸, որը հեղինակը նվիրեց «Նրբագույն բանաստեղծ և Նարեկավանքի դպրոցը լուսաբանող սիրելի Հրաչյա Թամրազյանի հիշատակին»:

Գիտական ու գիտակազմակերպական վաստակի համար Վիգեն Ղազարյանն արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2006), պարգևատրվել ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հուշամեդալով» (2008), ՀՀ ԳԱԱ Պատվոգրով (2003) և Վաստակագրով (2018):

Եվ այդուհանդերձ՝ բազմավաստակ արվեստաբանի ու բազմահմուտ մանկավարժի լավագույն ստեղծագործությունն իր դուստրերն են՝ տնտեսագիտության թեկնածուներ Աստղիկ և Ամելիա Ղազարյաները: Հավելեմ, որ հոբելյարի բոլոր նվաճումներում կարևոր նշանակություն ունի նրա կենաց զուգերգը տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիրվա Սահրադյանի հետ, որը շարունակվում է արդեն շուրջ չորս տասնամյակ:

Վերստին ջերմորեն շնորհավորելով մեր գործընկերոջը հոբելյանի կապակցությամբ՝ մաղթում ենք արևշատություն և գիտաստեղծագործական նորանոր նվաճումներ:

Աննա ԱՍԱՏԻՅԱՆ

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

⁸ **Ղազարյան Վ.**, Պատուհաններ, Բանաստեղծություններ, Երևան, «Նաիրի», 2016, 304 էջ:

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

- 1943 Ծնվել է մարտի 16-ին, Երևանում, գրականագետ Հովհաննես Ղազարյանի և Հայաստանի Հեռուստառազիտպետկոմի կադրերի բաժնի վարիչ Ամալյա Ղազարյանի ընտանիքում
- 1960 Ավարտել է Երևանի Աղասի Խանջյանի անվան միջնակարգ դպրոցը
- 1955-58 Հաճախել է Ղ. Ղուկասյանի անվան պիոներների պալատի նկարչական խմբակ
- 1965 Ավարտել է Խ.Աբովյանի անվան Հայկական պատական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի նկարչության և տարրական կրթության մեթոդիկայի բաժինը
- 1965-66 Աշխատել է թարգմանիչ, սրբագրիչ և խմբագիր Հայկական մամուլի գործակալությունում (Արմտագ)
- 1968 Աշխատել է Հայկական Սովետական հանրագիտարանում որպես կրտսեր գիտաշխատող
- 1969 Մասնագետ էքսկուրսավար Հայաստանի պետական պատկերասրահում
- 1969-1980 Թարգմանիչ Հայկական ռադիոյի և Հեռուստատեսությունից Սփյուռքի բաժնում
- 1970-1973 ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ
- 1975 ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի դիսերտացիոն խորհրդի մայիսի 23-ի նիստում պատշտապնել է թեկնածուական դիսերտացիա «Սարգիս Պիճակ» թեմայով և ԽՍՀՄ ԲՈՂ-ի Հոկտեմբերի 15-ի որոշմամբ ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան
- 1975-1987 ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի

կրտսեր գիտաշխատող

- 1978-ից* գեկուցումներով Հանդես է եկել տարբեր միջազգային գիտաժողովներում՝ Երևան, Թբիլիսի, Մոսկվա, Վիչենցա, Վենետիկ, Բորնյա, Նյու Յորք, Ղարաբաղ: Դասախոսություններով Հանդես է եկել Հայաստանում, Իտալիայում (Վենետիկ, Ֆոսկարիի համալսարան), Մատենադարանում և Հայ միջնադարյան հուշարձանների մոտ, Դիլիջանում, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում, Աշտարակում)
- 1981* Մասնակցել է Հայ արվեստի նվիրված միջազգային երրորդ սիմպոզիումին (Վենետիկ, Իտալիա)
- 1983* ՍՄԿԿ անդամ
- 1984* ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ միաձայն ընտրվել է կերպարվեստի բաժնի կրտսեր գիտաշխատողի պաշտոնում
- 1985* ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ միաձայն ընտրվել է կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատողի պաշտոնում
- 1988-ից* ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ
- 1992* Պաշտպանել է ատենախոսության «Խորանների մեկնություններ» թեմայով Ռուսաստանի Արվեստագիտության ինստիտուտում և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան
- 1995-ից* ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի անդամ
- 1995-2008* ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ

- 1997 *Ընտրվել է Հայաստանի գրողների միության անդամ*
- 1999-2013 *Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպար-
վեստի պատմություն և տեսություն ամբիոնի վարիչ*
- 2002 *Ընտրվել է Հայաստանի նկարիչների միության անդամ*
- 2003 *Պարգևատրել է ՀՀ ԳԱԱ Պատվոգրով*
- 2004-ից *ԵԳՊԱ «Տարեգրքի» խմբագրական խորհրդի անդամ*
- 2005 *Որակավորվել է որպես առաջատար գիտաշխատող*
- 2006 *Արժանացել է ՀՀ Մշակույթի վաստակավոր գործչի պատ-
վավոր կոչման*
- 2008 *ՀՀ ԿԳ նախարար Սպարտակ Սեյրանյանի՝ նոյեմբերի
24-ի հրամանագրով «Կրթության և գիտության ոլորտում
ներգրաժ մեծագույն ավանդի համար, ՀՀ ԳԱԱ Արվեստի
իսնտիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանի կապակ-
ցությամբ» պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտու-
թյան նախարարության հուշամեդալով*
- 2009 *Հեղինակային խմբի կազմում արժանացել է ՀՀ Պետական
մրցանակ՝ Կերպարվեստի ոլորտում «Հայ արվեստի պատ-
մություն» աշխատության համար (համահեղինակներ՝ Ա.
Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան)*
- 2010 *Որակավորվել է որպես գլխավոր գիտաշխատող*
- 2010 *Ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
- 2013-2018 *Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի արվեստա-
գիտություն և հումանիտար գիտությունների ամբիոնի
վարիչ*
- 2014-ից *«ԿԱՆԹԵՂ» գիտական պարբերականի խմբագրական
խորհրդի անդամ*
- 2018 *Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Վաստակագրով՝ ծննդյան
75-ամյա հոբելյանի կապակցությամբ*

**ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐԹԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**

ՄԵՆ ԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սարգիս Պիծակ, Երևան, ՀՄՍՀ ԳԱԱ Հրատ., 1980, 150 էջ, 7 գունավոր, 72 սև-սպիտակ պատկեր:
2. Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ - XIV դ. սկիզբ), Երևան, ՀՄՍՀ ԳԱԱ Հրատ., 1984, 186 էջ, 64 սև-սպիտակ պատկեր, 12 գծապատկեր:
3. Матенадаран, Том 1, Армянская рукописная книга VI-XIV веков, Москва, “Книга”, 1981 (соавтор – С.Манукян), 282 с., 402 илл.
4. Խորանների մեկնություններ (Աշխ-սիրություն՝ Վ.Ղազարյան: Խմբ. խորհ.՝ Ա.Զարյան և ուրիշներ: Խմբ.՝ Գ.Տեր-Վարդանյան), Երևան, «Սարգիս Խաչենց Այբբենգիրմ» Հրատ., 1995, 191 էջ, 4թ. նկ.:
5. Մեկնությունք խորանաց (Արվեստի տեսության միջնադարյան բնագրեր), Աշխատասիրությունք Վ.Հ. Ղազարյանի, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2004, 478 էջ, 56 պատկեր:
6. Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2009 (Համահեղինակներ՝ Արարատ Աղայան, Հրավարդ Հակոբյան, Մուրադ Հասարթյան), 575 էջ:
7. Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2012 (Համահեղինակ՝ Հրավարդ Հակոբյան), 260 էջ, 255 պատկեր:
8. Трансформация животных и растительных мотивов в Армянской рельефной средневековой орнаментике (IX-XIV вв.), Ереван, “Астхик Гратун”, 2016 (соавтор – В.Ваганян), 256 с., больше ста иллюстраций.

ԱԼՔՈՄՆԵՐ

1. Մանրանկարչություն (Հայերեն, ռուսերեն և անգլերեն), Էջմիածնի գանձերը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 1984:
2. Ներածություն, «Քսանհինգ», Հայաստանի Նկարիչների միություն, Աբովյան, 1999, էջ 4-14:
3. Խոսք, Ալբոմ «Կարէն Սմբատեան», Երևան, «Վան Արեան», 2006, էջ 5-9:
4. Վիզեն Ղազարյան, Գազիկ Ղազարյանի գծերի և ձևերի աշխարհը, Գազիկ Ղազարյան. գծերի և ձևերի աշխարհը (Հայերեն, ռուսերեն և անգլերեն), Երևան, 2007, էջ 7-30:
5. Մետաֆիզիկական մոգական իրականության Հայ վարպետը, Վաղարշակ Արամյան (ալբոմ), Երևան, «Տիգրան Մեծ», էջ 3:
6. Արամ Իսաբեկյանի նկարչությունը, Արամ Իսաբեկյան (ալբոմ), տեքստը՝ Վ. Ղազարյանի (Հայերեն, անգլերեն), Երևան, 2010, էջ 7-107:

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ

1. Նվաճումներ ու որոնումներ, «Սովետական արվեստ», N 9, 1968, էջ 42-44:
2. Կերպարվեստն ըստ Ներսես Շնորհալու, Լրաբեր Հասարակական գիտությունների, N 1, 1972, էջ 68-75:
3. Մատենադարանի թիվ 5786 գրչագրի լուսանցանկարները, Լրաբեր Հասարակական գիտությունների, N 9, 1973, էջ 80-87:
4. Սարգիս Պիժակի պատկերագրողումներից, «Սովետական գրականություն», N 3, մարտ, 1974, էջ 103-134:
5. Նոր գիրք Հայ միջնադարյան քանդակի մասին, «Սովետական գրականություն», Երևան, N 10, 1976, էջ 141-144:
6. Սարգիս Պիժակ, Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Երևան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1976, էջ 392-396:
7. Черты эллинистических традиций в армянской миниатюре, “Античность и античные традиции в культуре и искусстве народов Советского Востока”, Москва, изд. “Наука”, 1976, стр. 165-172.
8. Ինքնանկարը Հայ մանրանկարչության մեջ, «Գիտություն և տեխնիկա», 9, 1981, էջ 30-33:
9. Միջնադարյան պատկերը մոնոդրոլիթյան մասին, «Գարուն», N 7, 1982, էջ 80-84:
10. Саркис Пицак, Видные деятели армянской культуры (V-XIII века), Ереван, изд. ЕГУ, 1982, стр. 313-317.
11. «Նախատիպը» և «պատկերը» ըստ Ղուկաս Վանանդեցու, «Հայկական արվեստ», Հատոր 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 110-115:

12. *Ս.Տեր-Ներսիսյան, Պատմաբանասիրական հանդես, N 2, 1989, էջ 234-236:*
13. *1000 лет рукописной книге, “Памятные книжные даты”, 1989, Москва, “Книга”, 1989, стр. 202-205 (соавтор – С.Манукян).*
14. *Միրարփի Տեր-Ներսիսյանը և կիլիկյան մանրանկարչությունը, «Արվեստ», N 4, 1990, էջ 32-38:*
15. *Գրիգոր Տաթևացու խորանների մեկնությունը, «Գարուն», N 3, 1991, էջ 84-89:*
16. *Արեոպագիտիկաները և նրանց նշանակությունը եկեղեցական վարդապետության մեջ. Դիոնիսիոս Արիսպագացի. Խորհրդական աստվածաբանություն, «Գանձասար», Բ, 1992, էջ 138-150:*
17. *Գուլնի ուսմունքը խորանների մեկնություններում, «Գանձասար», Բ, 1992, էջ 328-340:*
18. *Գեղագիտական ըմբռումները խորանների մեկնություններում, «Գանձասար», Գ, 1993, էջ 306-319:*
19. *Թվային խորհրդարանությունը խորանների մեկնություններում, «Գանձասար», Դ, 1993, էջ 318-333:*
20. *«Արեոպագիտիկաների» խորհուրդը. Առաջաբան և թարգմ. գրաբարից, «Գարուն», N 4, 1994, էջ 71-78:*
21. *Հայ վաղ միջնադարյան գեղարվեստի ինքնությունը ցուցանիշները ըստ Ստրփիգովսկու, «Ինքնություն», 1, Կամար, Երևան, 1995, էջ 185-199:*
22. *Պոլ Սեզանի արվեստը և դասերը, Պոլ Սեզան. Նամակներ. գրույցներ, Երևան, «Ս. Խաչենց», 1996, էջ 5-17:*
23. *Խորաններն իբրև խորհուրդ, «Նորք», Թիվ 1, 1996, էջ 135-142:*
24. *Խորանների մեկնությունների արվեստագիտական նշանակությունը և նրանց վերաբերյալ գրականության տեսություն, «Բանբեր Երևանի համալսարանի», N3 (93), 1997, էջ 112-128:*
25. *Հայ կերպարվեստի պատմագրությունը որոշ խնդիրներ, «Գարուն»,*

№ 6, 1998, էջ 91-94:

26. Միջավայրը կիրիկյան մանրանկարներում, «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2000, էջ 197-202:
27. Հայոց ապահով ապագայի նվիրյալը, Հ. Լեւոն Զեքիեան, Երևան, 2000, էջ 3-6:
28. Отражение символики “Толкований хоранов” в некоторых иллюстрированных рукописях, “Армения и Христианский Восток”, Изд. “Гутентюн” НАН РА, 2000, стр. 295-302.
29. Սրբ Հերբերտ Ռիդ, Հերբերտ Ռիդ, Արդի նկարչության համառոտ պատմություն, Երևան, «Սարգիս Խաչենց», 2002, էջ 5-14:
30. Երկու խոսք, Յուրգիս Բարտուշայտիս. Ուսումնասիրություն վրաց և հայ միջնադարյան արվեստի, Երևան, «Սարգիս Խաչենց», 2003, էջ 5-10:
31. Էդվարդ Վարդանյանի գեղարվեստական աշխարհը, «Նոր դար», № 4, 2003, էջ 322-324:
32. Լեւոն Հախվերդյան (մահախոսական), Պատմաբանասիրական հանդես, № 1, 2003, էջ 305-309:
33. Էդվարդ Վարդանյանի գեղարվեստական աշխարհը, «Նոր դար», № 4, 2003, էջ 322-324:
34. Հայկականությունը Արշիլ Գորկու ընկալումով, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա. «Տարեգիրք», գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2004, էջ 5-15:
35. Մոդեռնիզմը և հայկական արվեստի կայացումը, Հայաստանը Եվրոպայի կայացման ճանապարհին (ինքնություն - 2), Երևան, 2005, էջ 79-86:
36. Շրջանակը ավետարանիչների նկարներում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա. Տարեգիրք, գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2005, էջ 34-39:

37. Արշիլ Գորկի. գեղարվեստի խորանի մեծ նվիրյալը, «Էջմիածին», 2005, թիւ Դ., էջ 118-127:
38. Հրավարդ Հակոբյան. գիտնականը և քաղաքացին, Հրավարդ Հակոբյան. Կենսամատենագիտութիւն, Երևան, 2005, էջ 3-9:
39. Մոդեռնիզմը և հայ կերպարվեստի զարգացումը, «Մշակույթ», թիվ 1, 6 մարտի, 2006, էջ 15-16:
40. Բուսական մոտիվների խորհրդաբանութիւնը «Խորանների մեկնութիւններում» և դրանց կիրառական ոլորտները, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա. Տարեգիրք, գիտական աշխատութիւնների ժողովածու, Երևան, 2006, էջ 17-21:
41. Էդուարդ Իսաբեկյան. Հայ նորագույն գեղանկարչութեան նահապետը, Մ.Միքայելյան, Էդուարդ Իսաբեկյան, «Անահիտ», էջ 198-199:
42. Պետրոս Ադամյանի պոեզիայի և նկարչութեան մասին, Հայ արվեստի հարցեր - 1, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 2006, էջ 183-191:
43. The Creative World of Edvard Vardanian, Armenian Art Cultural Magazine, 2 (16), 2006, p. 198-199.
44. Մանրանկարչութիւն, Սուրբ Հայաստան. պատմութիւն և մշակույթ. Աստվածաշնչյան Հայաստանից մինչև VIII դ. վերջ, Երևան, Հայաստանի պատմութեան թանգարան, 12 սեպտեմբեր-30 նոյեմբեր, 2007թ., Ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 2007, էջ 206-219:
45. Խաչքար, Սուրբ Հայաստան. պատմութիւն և մշակույթ. Աստվածաշնչյան Հայաստանից մինչև VIII դ. վերջ, Երևան, Հայաստանի պատմութեան թանգարան, 12 սեպտեմբեր-30 նոյեմբեր, 2007թ., Ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 2007, էջ 221-229:
46. Կիլիկիայի մանրանկարչութիւնը, Սուրբ Հայաստան. պատմութիւն և մշակույթ. Աստվածաշնչյան Հայաստանից մինչև VIII դ. վերջ, Երևան, Հայաստանի պատմութեան թանգարան, 12 սեպտեմբեր-30 նոյեմբեր, 2007թ., Ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 2007, էջ 326-339:

47. *Երկար սպասված մենագրություն, Լրաբեր Հասարակական գիտությունների, N 3, սեպտեմբեր-դեկտեմբեր, 2007, էջ 245-249:*
48. *Les “Commentaires des Tables des Canons” comme sources arméniennes médiévales de la théorie de l’art ornemental – Arménie. La magie de l’écrit sous la direction de Claude Mutafian, Musees de Marseille, 2007, p. 111-117.*
49. *Evangile d’Etchmiadzin - Armenia sacra, Mémoire chrétienne des Arméniens (IV^e - XVIII^e siècle), sous la direction j.Durand, I.Rapti et D.Giovannoni, Musée du Louvre Edition. Paris, 2007, p. 186-187 (coauthor - Rapti I.).*
50. *Reliure de l’Evangile d’Etchmiadzin. Armenia sacra, Mémoire chrétienne des Arméniens (IV^e - XVIII^e siècle), sous la direction j.Durand, I.Rapti et D.Giovannoni, Musée du Louvre Edition. Paris, 2007, p. 105-107 (coauthor - Durant J.).*
51. *Deux feuilles de l’Evangile d’Etchmiadzine - Armenia sacra, Mémoire chrétienne des Arméniens (IV^e - XVIII^e siècle), sous la direction j.Durand, I.Rapti et D.Giovannoni, Musée du Louvre Edition. Paris, 2007, p. 108-109.*
52. *Թռչունների և կենդանիների պատկերագրությունը «Խորանների մեկնություններում», Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա. Տարեգիրք, գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2008, էջ 10-15:*
53. *Ռոբին Զորջ Քոլլինգվուդի «Արվեստի սկզբունքները» կամ ճիգեր՝ «բուն արվեստը» բացահայտելու, Էսթետիկայի Հարցեր, Գիրք 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 32-51:*
54. *Սարյանը և միջնադարը, Հայ արվեստի Հարցեր - 2, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2009, էջ 109-116:*
55. *Չար ոգիների և հրեշտակների պատկերագրությունը Սարգիս Պի-ժակի մանրանկարներում, Հայ արվեստի Հարցեր - 3, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010, էջ 17-20:*

56. Ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը և կերպարվեստը, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա. Տարեգիրք, գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2011, էջ 116-121:
57. Հ.Հովհաննիսյան. ծննդյան 75-ամյակի առթիվ, Պատմաբանասիրական Հանդես, N 2, 2011, էջ 293-299:
58. Ռուբեն Գրիգորի Դրամբյան (ծննդյան 120-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական Հանդես, N 3, 2011, էջ 263-269:
59. Դիոնիսիոսի «նման» և «ոչ նման» կատեգորիաները և դրանց պատմական արժեքը, Հայ արվեստի հարցեր - 5, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 114-121:
60. Վիլհելմ Մաթևոսյանը՝ արվեստի տեսաբան և մշակ, Մաթևոսյան Վ. Ուսումնասիրություններ, Երևան, «Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆ-ՖՈՒՆԿՈՒՆԻՍ», 2014, էջ 5-16:
61. Արտաշես Հունանյան նկարիչը, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 403-405:
62. Կերպարվեստ, Հայոց պատմություն, հատոր II, Միջին դարեր (IV դար - XVII դարի առաջին կես), Գիրք երկրորդ (IX դարի կես - XVII դարի առաջին կես), Երևան, «Զանգակ», 2014, էջ 492-498:
63. Որմանկարչություն, Հայոց պատմություն, հատոր II, Միջին դարեր (IV դար - XVII դարի առաջին կես), Գիրք երկրորդ (IX դարի կես - XVII դարի առաջին կես), Երևան, «Զանգակ», 2014, էջ 498-501:
64. Մանրանկարչություն, Հայոց պատմություն, հատոր II, Միջին դարեր (IV դար - XVII դարի առաջին կես), Գիրք երկրորդ (IX դարի կես - XVII դարի առաջին կես), Երևան, «Զանգակ», 2014, էջ 501-513:
65. Կերպարվեստ, Հայոց պատմություն, հատոր II, Միջին դարեր (IV դար - XVII դարի առաջին կես), Գիրք երկրորդ (IX դարի կես - XVII

դարի առաջին կես), Երևան, «Զանգակ», 2014, էջ 668-672:

66. Կերպարվեստը, Սփյուռքահայ մշակույթը XX դարում, Հայոց պատմություն, հատոր IV, գիրք երկրորդ, Նորագույն ժամանակաշրջան (1945-1991 թթ.), Երևան, «Զանգակ», 2016, էջ 577-583:
67. Պատկերի և պատկերագրության հիմնավորումը վաղ միջնադարում, Բանբեր հայագիտության, հայագիտական միջազգային հանդես, 3 (15), 2017, էջ 178-193:

ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

1. «Նախատիպը» և «պատկերը» ըստ 17-րդ դարի վերջի և 18-րդ դարի սկզբի հեղինակ Ղուկաս Վանանդեցու, Հանրապետական առաջին գիտական կոնֆերանս՝ նվիրված Հայ արվեստի և ճարտարապետության պրոբլեմներին: Զեկուցումների թեզեր (Խմբ.՝ Վ.Հ.Ղազարյան, Ն.Ս.Ստեփանյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 10-11:
2. Иконография Евангелиста в киликийских миниатюрах XIVв., Ереван, Изд-во АН Арм. ССР, 1978, 11 стр.
3. Иконографическое и стилистическое родство миниатюр “Праздничного цикла” Саркиса Пицака и некоторых каппадокийских фресок, “Научные сообщения”, Вып. X, Вторая республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении, Москва, изд. “Наука”, 1978, стр. 47-54.
4. Գործողության վայրը Ծննդյան ցիկլում (Մատենադարանի N 7651 ձեռագրում), Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված Հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր, Երևան-Սարգարապատ, 18-22 սեպտեմբերի, 1979, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 82:
5. Self-Portrait in Armenian Miniatures, Third International Symposium on Armenian Art, Summaries of the Papers, 1981, Milano (Vicenza) Castelfranco V. (Plazzola sul Brenta) Venezia. 25 settembre – 1 ottobre, San Lazzaro-Venezia, 1981, p. 86.
6. Ավետարանիչների պատկերագրությունը 14-րդ դարի Կիլիկյան մանրանկարչության մեջ, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 4-րդ, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 89-94:
7. Self-Portrait in Armenian Miniature, ATTI. Del terzo simposio internazionale di arte Armena. 1981, Milano (Vicenza) Castel-

franco V. (Plazzola sul Brenta) Venezia. 25 settembre – 1 ottobre, San Lazzaro-Venezia, 1984, p. 199-205, pl. 1-8.

8. Содержание средневековых текстов “Толкований хоранов”, Четвертый международный симпозиум по армянскому искусству, Ереван, 11-17 сентября, 1985, Тезисы докладов, Ереван, 1985, стр. 132-134.
9. Հովհաննես Արքայեղբոր դպրոցի գրքարվեստը և նրա ազդեցությունը Հետագա կլիկյան արվեստի վրա - Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված Հանրապետական 4-րդ կոնֆերանս, գեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 135-137 (Համահեղինակ՝ Ս.Մանուկյան):
10. On the Commentary of Canon-Tables by Grigor Tatevatsi – AIEA. Fifth Biennal Conference, Bologna, 1990, p. 23-25.
11. The Doctrine of Colour in Commentaries on Canon-Tables – Atti del quinto Simposio Internazionale di Arte Armena, 1992, Venezia – S. Lazzaro, p. 687-694.
12. Շրջանակը պետարանիչների նկարներում, Հայ արվեստի Հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս, գեկուցումների թեզիսներ, Երևան, 12-14 հոկտեմբերի, 1995թ., Երևան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1995, էջ 34-36:
13. Հայ կերպարվեստի պատմագրությունն որոշ պրոբլեմներ, Հայ արվեստին նվիրված Հանրապետական 8-րդ կոնֆերանս, գեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Հրատ., 1997, էջ 27-29:
14. Մեկնությունների արտացոլումը խորանների պատկերներում, Միջազգային գիտաժողով. Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, գեկուցումների թեզեր, Երևան, 1998, էջ 26-27:
15. Աստվածացումն ըստ «Արեոպագիտիկաների», Հումանիտար գիտությունների հրատապ հիմնախնդիրները հասարակության անցումնային փուլում, Գիտաժողովի նյութեր, Երևան, 1998, էջ 59-60:

16. Բույսերի և կենդանիների պատկերազրույթյունը «Խորանների մեկնություններում», Ակադեմիկոս Ռուբեն Զարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով, Երևան, 14-17 սեպտեմբերի, 1999թ., գեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 25:
17. Գրքարվեստը և տեսությունը միջնադարյան Հայաստանում. Տերունական թեմաները իբրև պատմական թեմաներ: Զարդային խորհրդաբանությունը «Խորանների մեկնություններում», Զավախյան գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 30-36:
18. Հայ միջնադարյան կերպարվեստի ուսումնասիրության ուղիները, «Հայագիտական միջազգային համաժողով. Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները», գեկուցումների գրույթներ, Երևան, 2003, էջ 193:
19. Հովհան Օձնեցիի որպես պատկերասեր և պատկերաբան, «Սուրբ Հովհան Օձնեցի հայրապետը և իր ժամանակը» գիտաժողովի նյութեր, Ս. Էջմիածին, 2004, էջ 107-111:
20. Հայ միջնադարյան կերպարվեստի ուսումնասիրության ուղիները, «Հայագիտական միջազգային համաժողով. Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները», Երևան, 1-20 սեպտեմբերի, 2003թ., Երևան, «Տիգրան Մեծ», 2004, էջ 486-490:
21. Արշիլ Գորկի. Հայկական ստեղծագործական ֆանտազիան և կատարելության ճգտումը, Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողով: Երևան, 2-4 նոյեմբերի, 2004, հիմնադրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2004, էջ 38:
22. Մովսես Կաղանկատվացին և Կիրակոս Գանձակեցին կերպարվեստի անհրաժեշտության մասին, Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, գեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2006, էջ 195-196:
23. Արցախ-Ուտիքի նպատար պատկերամարտի շարժման դեմ Խորան-

ների մեկնություններում և եկեղեցիների պատկերազարդման գործում, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, Ձեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24 2006 թ., Ստեփանակերտ, Երևանի Համալսարանի հրատ., Երևան, 2007, էջ 388-394:

24. Արցախ-Ուտիքի նպաստը պատկերամարտի շարժման դեմ, «խորանների մեկնություններում» և եկեղեցիների պատկերազարդման գործում, Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, գեկուցումների ժողովածու, Երևան, 2007, էջ 388-394:
25. Արշիլ Գորկի. Կարոտախտ և արվեստ, Հայոց ցեղասպանություն - 100. Ճանաչումից՝ հատուցում Միջազգային գիտաժողովի (15-16 հոկտեմբերի, 2015) գեկուցումների դրույթների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 318-320:
26. Արշիլ Գորկին և կարոտախտը, «Հայոց ցեղասպանություն - 100, ճանաչումից՝ հատուցում» միջազգային գիտաժողովի գեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 606-613:

Հ Ա Ն Բ Ա Գ Ի Տ Ա Բ Ա Ն Ա Յ Ի Ն Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Բ

1. Գրիգոր Պիծակ, «ՀՍՀ» (Հայկական սովետական հանրագիտարան), հ. 3, Երևան, 1977, էջ 290-292:
2. Թուչնագիր, Թուչնապատկեր, հ. 4, «ՀՍՀ», 1976, էջ 2016-2017:
3. Խճապատկեր, «ՀՍՀ», հ. 5, Երևան, 1979, էջ 56-57:
4. Խոջաբեկյան Վանո, «ՀՍՀ», հ. 5, Երևան, 1979, էջ 74:
5. Խորան, «ՀՍՀ», հ. 5, Երևան, 1979, էջ 85:
6. Կարսի Ավետարան, «ՀՍՀ», հ. 5, Երևան, 1979, էջ 344-345:
7. Կենդանագարդ, «ՀՍՀ», հ. 5, Երևան, 1979, էջ 363-364:
8. Կերպարվեստ («Կիրիկյան Հայաստան» կոմպլեքս հոդվածում, «ՀՍՀ», հ. 5, Երևան, 1979, էջ 422-423):
9. Հյուսվածագարդ, «ՀՍՀ», հ. 6, Երևան, 1980, էջ 555:
10. Հովհաննես, «ՀՍՀ», հ. 6, Երևան, 1980, էջ 555:
11. Մանրանկարչություն, «ՀՍՀ», հ. 7, Երևան, 1981, էջ 246-248:
12. Մարգարե, «ՀՍՀ», հ. 7, Երևան, 1981, էջ 300:
13. Մլբե թագուհու Ավետարան, «ՀՍՀ», հ. 7, Երևան, 1981, էջ 628-629:
14. Պատկերագրողում, «ՀՍՀ», հ. 9, Երևան, 1983, էջ 154-155:
15. Սարգիս Պիծակ, «ՀՍՀ», հ. 10, Երևան, 1984, էջ 217-218:
16. Վասակ իշխանի Ավետարան, «ՀՍՀ», հ. 11, Երևան, 1985, էջ 289-290:
17. Տերունական պատկեր, «ՀՍՀ», հ. 11, Երևան, 1985, էջ 689:
18. Ութ մանրանկարիչների Ավետարան, «ՀՍՀ», հ. 12, Երևան, 1986, էջ 128-129:
19. Միջնադարյան կերպարվեստ. Որմնանկարչություն և մանրա-

նկարչություն, «ՀՄՀ», «Սովետական Հայաստան» հատոր, Երևան, 1987, էջ 546-548:

20. Խաչքար, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 432-434:
21. Խորան, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 441-443:
22. Կարսի Ավետարան, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 460-461:
23. Կենաց ծառ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւիւմ, 2002, էջ 482-483:
24. Մանրանկարչություն, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 673-683:
25. Ութ մանրանկարիչների Ավետարան, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 934-935:
26. Սրբապատկեր, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւիւմ, 2002, էջ 934-935:
27. Սկեռայի Ավետարան, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 910-911:
28. Վեհափառի Ավետարան, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 978-979:
29. Վասակ իշխանի Ավետարան, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 961:
30. Մարիամ. պատկերազրույթ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 705-708:
31. Կերպարվեստագիտություն, ՀԱՅԱՍՏԱՆ հանրագիտարան, Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, 2012, էջ 577-580:

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր Թ Ե Ր Թ Ե Ր Ո Ւ Մ

1. Արվեստի կենսահաստատ ուժով (Ա.Բաժբեռուկ – Մելիքյանի ցուցահանդեսի առթիվ), «Սովետական Հայաստան», 27 հունիսի, 1968:
2. Տաղանդ և բեկված ճակատագիր, «Վարուժան», թիվ 12, օգոստոս, 1993, էջ 11:
3. Մտածող և հայի ստեղծագործ ուժով ապրող գիտնականը (նվիրված Ա.Զարյանին), «Վարուժան», թիվ 13, նոյեմբեր 1993, էջ 1:
4. Հայ քանդակագործների աննախադեպ հաջողությունը Իտալիայում, «Վարուժան», թիվ 6, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1994, էջ 36-37:
5. Խայտաբղետ «արմանախ», «Շրջան», թիվ 11, 07.04.1995:
6. Ինչպես է ներկայացված 19-20-րդ դդ. Հայ արվեստը Բոխումում, «Շրջան», թիվ 10, 07.04.1995:
7. Բոխումյան ծուռ հայելու մեջ, «Նպատակ», ՀՀ ԳԱԱ պաշտոնաթերթ, 1-15 հունվարի, 1995, N 9(52):
8. Տարօրինակ մոտեցում, «Նպատակ», 1-15 օգոստոսի, 1995, N 18:
9. Սարգիս Պիծակը և «Պիծակի» լեզենդը, «Լուսավորիչ», 1996, հունվար, Ա, էջ 7:
10. Առաջին նկարիչը, որին վերջնականապես բացվել է գաղտնիքը. Արշիլ Գորկու մահվան 50-ամյակի առթիվ, «Հայաստանի Հանրապետություն», թիվ 192, 1 հոկտեմբերի, 1998:
11. Վիլհելմ Մաթևոսյան. արվեստի փրկիսոփայություն մարդը, «Գրական թերթ», N 15, 15-31 դեկտեմբերի, 1998, էջ 8-9:
12. Արմեն Զարյան. ճշմարիտ մտավորական, «Ազգ», 3 հունիսի, 1994:
13. Անդրանիկ Կիլիկյան. Պայծառ մարդը, տաղանդավոր արվեստա-

գետը և բնածին մանկավարժը, «Հոգևոր Հայրենիք», 2005, սեպտեմբեր, էջ 5:

14. Մոդեռնիզմը և Հայ կերպարվեստի զարգացումը, «Մշակույթ», թիվ 1, 6 մարտի, 2006, էջ 15-16:
15. Հայոց մեծ ընդլզումի նկարիչը (Է. Խաբեկյան), «Ազգ», 22, օգոստոսի, 2007:
16. Երկար սպասված մենագրություն (Рубен Дрампян, Акоп Овнатанян, Ереван, 2006, 150 с., 86 илл.), «Քրիստոնյա Հայաստան», 2007, սեպտեմբեր Ա, թիվ 17 (253), էջ 4-7:
17. Էդուարդ Խաբեկյան, Հայ մեծ քաղաքացի գեղանկարչի ծննդյան 95-ամյակի առթիվ, «Ազգ», ներդիր, 19 դեկտեմբերի, 2009, էջ Դ (Խաբեկյանի բանաստեղծությունների հետ):
18. Подвижник искусства (к 85-летию Николая Котанджяна), Под звездами, Совместный проект Мин. культуры РА и “Голоса Армении”, 21 марта, 2013.
19. Հրավարդ Հակոբյան, Իմ տաղանդաշատ ընկերոջ մասին, «Ազգ» օրաթերթ, Մշակույթ, 21, 5 հունիսի, 2015:

**ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐԹԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ
ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՏԵՆ ԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. **Իսաբելյան Մհեր Արամի** - «Էդվարդ Իսաբելյանի գեղանկարչության ժանրային և ձևաոճական առանձնահատկությունները», 2003թ., 10 սեպտեմբերի:
2. **Գևորգյան Արամայիս Գևորգի** - «XII-XIIIդդ. Հայկական ճարտարապետական հուշարձանների զարդաքանդակը», 2003թ., 10 սեպտեմբերի:
3. **Հովսեփյան Գալուստ Սերգեյի** - «Վաղ շրջանի Հայագգի սրբերի պատկերազրույթունը Հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ», 2003թ., 26 սեպտեմբերի:
4. **Մաստուրյան Արման Սամվելի** - «Դիմանկարը Հայ կերպարվեստում 1960-1980թթ.», 2004թ., 19 հոկտեմբերի:
5. **Հովհայան Արմեն Հրաչի** - «Գառզուի գրաֆիկան», 2004թ., 19 հոկտեմբերի:
6. **Առաքելյան Միքայել Գեղամի** - «Մանրանկարիչ Մեսրոպ Խիզանցու պատկերազարդ Ավետարանները (17-րդ դարի առաջին կես)», 2004թ., 25 հոկտեմբերի:
7. **Ավետիսյան Քնարիկ Գառնիկի** - «Աստվածամոր պատկերները Հայ միջնադարյան արվեստում («Աստվածամայրը մանկան հետ» հորինվածքի պատկերազրույթունը)», 2005թ., 28 սեպտեմբերի:
8. **Ամիրխանյան Ռուզաննա Ֆրունզեի** - «Խորանների ծագումնաբանությունը և վաղ խորհրդաբանությունը», 2006թ., 4 սեպտեմբերի:
9. **Մարտիրոսյան Առնոս Արիսի** - «Հայ նոր արվեստի ձևավորման մի քանի առանձնահատկությունները XVI-XVIIդդ. մատենական և մոնումենտալ նկարչության մեջ», 2007թ., 7 մայիսի:
10. **Մանուկյան Սեյրանուշ Սոսի** - «Տեքստաբաժանումները (ուղբ-րիկացիան) Հայկական ձեռագիր Ավետարանների գեղարվեստա-

կան ձևավորման Համակարգում», 2008թ., 21 հուլիսի:

11. **Գալստյան Աննա Բորիսի** - «Արշիլ Գորկին ամերիկյան քննադատության պատմության մեջ», 2008թ., 11 սեպտեմբերի:
12. **Ազատյան Վարդան Լևոնի** - «19-րդ դարի Համաշխարհային արվեստի գերմանական պատմագրությունը և Հայաստանի միջնադարյան արվեստը», 2008թ., 18 սեպտեմբերի:
13. **Բուբուլյան Ռուբեն Արմենի** - «Պոստիմպրեսիոնիզմի դրսևորումները Հայ գեղանկարչության մեջ XX դարի սկզբին», 2009թ., 25 հունիսի:
14. **Մարգարյան Արաքսյա Վարդանի** - «Մարիամ և Երանուհի Ասլամազյանների ստեղծագործական ուղին», 2010թ., 1 հուլիսի:
15. **Գրիգորյան Գրիգոր Վահագնի** - «Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները», 2011թ., 10 մարտի:
16. **Բաղդասարյան Արմինե Սուրենի** - «Սասունցի Դավիթ» էպոսի և գրական մշակումների նկարագրողումները», 2011թ., 12 մայիսի:
17. **Առաքեղյան Աշոտ Վահանի** - «1960-80-ական թթ. խորհրդահայ տպագրական գրաֆիկան», 2011թ., 15 դեկտեմբերի:
18. **Վահանյան Վահան Գրիգորի** - «Բուսական և կենդանական մոտիվների կերպարանափոխությունը Հայ միջնադարյան (IX - XIV դդ.) քանդակագործման մեջ», 2011թ., 16 հունիսի:
19. **Համբարյան Արամ Շավարշի** - «Տեղայնության և նորարարության միտումները Վանաձորի արվեստագետների ստեղծագործության մեջ (XX դարի II կես)», 2011թ., 1 դեկտեմբերի:
20. **Գրիգորյան Արմենակ Գևորգի** - «Հայ միջնադարյան արվեստի պատմագրությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբի Հայ պարբերական մամուլում», 2011թ., 8 դեկտեմբերի:
21. **Օհանջանյան Նարեկ Արմենի** - «Ութ մանրանկարիչների Ավետարանը», 2013թ., 6 հունիսի:
22. **Ղազարյան Դավիթ Գեղամի** - «Պահպանության գրերի /Հմայիլ-

ների/ գեղարվեստական հարգարանքը (15-րդ դարից մինչև 1659 թ.)», 2013թ., 5 դեկտեմբերի:

23. **Քոթանջյան Գարեգին Նիկողայի** - «Իմպրեսիոնիզմի գեղարվեստական ժառանգությունը և հայ գեղանկարչությունը (XIXդ. երկրորդ - XXդ. առաջին կես)», 2014թ., 29 մայիսի:

24. **Հմայակյան Մարգար Միմոնի** - «Իջևանի միջազգային սիմպոզիումների քարարձանների գեղարվեստական առանձնահատկությունները», 2014թ., 29 մայիսի:

25. **Դարձվար Ֆաթեմեհ (Իրան)** - «Քաջարյան շրջանի թեյարանային պատմողական որմնանկարչությունը», 2015թ., 22 հունվարի:

26. **Աղլամազյան Արման Սամվելի** - «Աբստրակտ արվեստի ձևավորումն ու ընթացքը Հայաստանում», 2015թ., 17 սեպտեմբերի:

27. **Մանասերյան Լիլիթ Լևոնի** - «Հայ բեմանկարչությունը 1950-1980-ական թթ.: Բեմանկարչական կերպարի, տարածական, կոմպոզիցիոն և գունային լուծումների փոփոխությունները», 2015թ., 24 սեպտեմբերի:

28. **Խազան Շահրբանու (Իրան)** - «Զարդանախչը Սեֆեյան թագավորության շրջանում», 2017թ., 19 հունվարի:

29. **Աբովյան Սերգեյ Խաչատուրի** - «Հայկական գրքարվեստը 1991-2016 թվականներին», 2018թ., 15 հունիսի:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նորովի Կոջոյանը, «Սովետական գրականություն», N 8, 1972, էջ 148-150:
2. Նոր գիրք Հայ միջնադարյան քանդակի մասին, «Սովետական գրականություն», N 10, 1976, էջ 141-144:
3. Վասպուրականի մանրանկարչության մասին նոր հետազոտություն, «Գրական թերթ», N 26, 15 հունվարի, 1977:
4. Արթեքավոր հրատարակություն, «Սովետական արվեստ», N 1, 1986, էջ 57-59:
5. Լ. Բ. Չուգասոյան. Գրիգոր Մաղկող, Երևան, 1986, 158 էջ, Պատմաբանասիրական հանդես, N 3, 1988, էջ 213-216:
6. Մտածող և Հայի ստեղծագործ ուժով ապրող գիտնականը. Արմեն Զարյան, «Վարուժան», թիվ 13, նոյեմբեր, 1993, էջ 10-11:
7. Т. А. Измайлова, Армянская миниатюра XI века, Москва, “Искусство”, 1979. “Византийский временник”, N 43, 1982, Москва, изд. “Наука”, стр. 264-266.
8. Հային բարձրացնող գիրքը կենսաբեր. Գարեգին Ա Վեհափառի խոհերը Հայոց գրքի մասին, «Վարուժան», թիվ 3, սեպտեմբեր, 1984:
9. Ուսումնասիրություն՝ նվիրված Ղրիմում նկարագարոված մի ձեռագրի, «Էջմիածին», Օգոստոս, 2003, էջ 107-111:
10. Կարծիք Դիդրոյի «Սալոնների» թարգմանության մասին, Հ.Բախչինյան, Դրվագներ ֆրանսիական գրականության պատմության, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 296-297:
11. Հենրիկին՝ Բողբերի «Չարի ծաղիկները» թարգմանչին, Հ.Բախչինյան, Դրվագներ ֆրանսիական գրականության պատմության, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 303:
12. Հ.Հովհաննիսյան. Հնագույն դրաման Հայաստանում, ծագման հարցի շուրջ, Պատմաբանասիրական հանդես, N 2, 2011, էջ 274-275:

**Գ Ե Ղ Ա Ր Վ Ե Ս Տ Ա Կ Ա Ն Ե Ր Կ Ե Ր Ե Վ
Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր**

1. Գյոթե, Վայմարյան քնար, Երևան, «Սովետական գրող», 1985, թարգմ. գերմաներենից, էջ 3-7, 18-20, 22-70, 94-99, 116-122, 133-134, 140-141:
2. Ղազարյան Վ., Խճանկար, Բանաստեղծություններ, Երևան, «Նաիրի», 1992, 77 էջ:
3. Ներսես Շնորհալի, Հիսուս Որդի, Առաջաբանը գրեց և արևելահայերենի վերածեց Վիգեն Ղազարյանը, Երևան, «Ապոլոն», 1991, էջ 5-223:
4. XX դարի Հայ պոեզիա, կազմեց Զ.Ավետիսյանը, Երևան, ՀԳՄ հրատ., 2005, (Վիգեն Ղազարյան, էջ 463-469):
5. Գյոթե, Հռոմեական էլեգիաներ (Առաջաբան, թարգմ., ծանոթ. Վ. Ղազարյանի), «Գարուն», 7, 1980, էջ 74-78:
6. Ղազարյան Վ., Բանաստեղծություններ, «Գարուն», 6, 1987, էջ 88-89:
7. Ղազարյան Վ., Բանաստեղծություններ, «Գարուն», 5, 1999:
8. Բանաստեղծություններ, «Գրական թերթ», N1 (2568), 1-15 հունվարի, 1999, էջ 12:
9. Ուխտի չլու Օդրն, Բանաստեղծություններ (թարգմ. անգլերենից Վ. Ղազարյանի), «Գարուն», 9, 1991, էջ 72-74:
10. Ղազարյան Վ., Փաթ ընկած մարդը, «Գարուն», 7, 1995, էջ 36-39:
11. Հերբերտ Ռիդ, Արդի նկարչության համառոտ պատմություն, անգլերենից թարգմանեց Կամո Բաղդադյանը, Առաջաբան և խմբագիր՝ Վիգեն Ղազարյան, 2002, Երևան, «Սարգիս Խաչենց», 228 էջ, 132 պատկեր:

12. Ռ. Ջ. Քոլլինզվուդ, Արվեստի Հիմունքները. թարգմ. անգլերենից և առաջաբանը Վ. Ղազարյանի, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինգո», 2007, 422 էջ:
13. Ռընե Ուելքեք, Օսթին Ուորրեն, Գրականության տեսություն, թարգմ. անգլերենից և առաջաբանը՝ Վ. Ղազարյանի, Համաթարգմանիչ և խմբագիր Հ. Բախչինյան, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինգո», 2008, 514 էջ:
14. Դիոնիսիոս Արեոպագոսի (Դիոնիսիոս Արիսպագոսի), Աստվածաբանական երկեր՝ Արեոպագիտիկաներ, Փոխադրությունը գրաբարից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վիգեն Ղազարյանի, Երևան, «Նաիրի», 2013, 238 էջ:
15. Ղազարյան Վ., Պատուհաններ, Բանաստեղծություններ, Երևան, «Նաիրի», 2016, 304 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն** Հովհաննեսի, Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան, երկու հատորով, հատոր առաջին, Աբաղյան-Ղուչյան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2005, էջ 703:
2. **Հրավարդ Հակոբյան**, Իմ տաղանդաշատ ընկերոջ մասին. Վիգեն Ղազարյանի գեղանկարչական անհատական ցուցահանդեսի առթիվ, «Ազգ» օրաթերթ – Մշակույթ, 05.06.2015:
3. **ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն** Հովհաննեսի, Հանրագիտական բառարան, երկու հատորով (գլխավոր խմբագիր՝ Հովհաննես Այվազյան), հատոր 2, Կ(ինո)-Ֆ(ուքսին), Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2018, էջ 248:
4. **Հրավարդ Հակոբյան**, Վիգեն Ղազարյան. գիտնականի ուղին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1 (652), հունվար-ապրիլ, 2018, էջ 344-345:
5. **Աննա Ասատրյան**, Բազմավաստակ արվեստաբանը և մանկավարժը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վիգեն Ղազարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, N 1 (207), 2018, էջ 292-295:
6. **Վիգեն Ղազարյան** - 75, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթ, մարտ, N 3 (316), 2018, էջ 7:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ – Վիզեն Ղազարյան. բազմալատակ արվեստաբանն ու բազմահմուտ մանկավարժը	5
Վիզեն Ղազարյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը	12
Վիզեն Ղազարյանի տպագիր աշխատությունների մատենագիտությունը	15
Մենագրություններ	15
Այբոմներ	16
Հոդվածներ գիտական պարբերականներում և ժողովածուներում..	17
Գիտական զեկուցումներ	24
Հանրագիտարանային հոդվածներ	28
Հոդվածներ թերթերում	30
Վիզեն Ղազարյանի գիտական ղեկավարությունը պաշտպանվածատենախոսություններ	32
Գրախոսություններ	35
Գեղարվեստական երկեր և թարգմանություններ	36
Գրականություն Վիզեն Ղազարյանի մասին	38

**ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

N 6

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

**Համակարգչային էջադրուժը՝ Վերա Պապյանի
Շապիկի ձևավորումը՝ Արմեն Մուրադյանի**

Հրատ. պատվեր № 891

Ստորագրված է տպագրության՝ 20.09.2018թ.:

Չափսը՝ 60 × 84^{1/16}, տպագրական 2,5 մամուլ:

Տպաքանակը՝ 120 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24**